Թեսթ 18

Ա. Լինդգենի

Մանչուկն ու Կառլսոնը
հատված
(1-ին մաս)

Ստոկհոլմ քաղաքը սովորական քաղաք է: Այդ քաղաքի շատ սովորական մի շենքում ապրում է սովորական մի ընտանիք;
Այդ ընտանիքում բոլորը սովորական են՝ հայրիկն էլ է **սովորական**, մայրիկն էլ: Բոսան, Բետան և Մանչուկն էլ սովորական երեխաներ են:
Ամբողջ շենքում ընդամենը մի անսովոր արարած կա՝ Կառլսոնը, որը ապրում էր տանիքի վրա:
Գուցե ուրիշ քաղաքներում տանիքի վրա ապրելը սովորական բան է, բայց այստեղ ոչ ոք տանիքի վրա չի ապրում:
Կառլսոնը **փոքրիկ**, հաստլիկ, ինքնավստահ մարդուկ է: Նա կարողանում է թռչել, հենց իր փորի վրայի կոճակը սեղմի, մեջքին գտնվող փոքրիկ շարժիչը կաշխատի, մի քիչ հետո կպտտվի պտուտակը, և Կառլսոնը կթռչի:
Նա շատ լավ է զգում տանիքի վրա, ամեն երեկո նստում է ու նայում աստղերին. տանիքից աստղերն ավելի լավ են երևում:
Մարդիկ նույնիսկ չգիտեն, որ տանիքի վրա տնակ կա, չեն էլ կարող տեսնել, որովհետև այն թաքնված է ծխնելույզի ետևում: Ընդհանրապես, մեծերը ուշադրություն կդարձնե՞ն այդքան փոքր տան վրա:
Մանչուկին տանը բոլորը սիրում են ու երես տալիս: Բայց այդ օրը, երբ նա ու Կառլսոնը ծանոթացան, այնքան էլ հաջող օր չէր, և Մանչուկ լինելը բոլորովին էլ հրաշալի չէր: Բոլորը նեղացրել էին նրան, իսկ հայրիկը բարկացել էր դպրոցից ուշ գալու համար:
-Թափառում ես փողոցներում,- ասել էր նա:
Բայց ախր, հայրիկը չգիտեր, որ ճանապարհին մի փոքրիկ, **սիրունիկ** շնիկ էր հանդիպել, հոտոտել էր իրեն, շարժել պոչիկը, կարծես ուզում էր իր շունը դառնալ: Մանչուկը նրան կբերեր, բայց ո՞վ կթողներ տանը շուն պահել: Բացի դրանից,այդ ժամանակ մի մորաքույր էր հայտնվել և կանչել շանը.
-Ռիկի՛, Ռիկի՛:
Փոքրիկը հասկացել էր, որ շունը երբեք իրենը չի լինի:
-Ուրեմն ամբողջ կյանքում առանց շան եմ ապրելու,- **տխուր** ասաց Մաչուկը:- Ա՜յ, մայրիկ, դու հայրիկ ունես, Բեսան և Բետան միշտ միասին են, իսկ ես... ես մենակ եմ, ոչ ոք չունեմ:
-Սիրելի Մանչուկ, չէ՞ որ բոլորս քոնն ենք, - ասաց մայրիկը:
-Չգիտեմ..,- հոգոց հանեց Մանչուկը, ու նրան հանկարծ թվաց, թե ինքը մեն-մենակ է աշխարհում ու ոչինչ չունի:
Ասենք՝ մի սենյակ ունի և գնաց այնտեղ:

1. Տեքստի չորս բառերում տառի փոխարեն վանդակ է դրված, դո՛ւրս գրիր այդ բառերը՝ լրացնելով բաց թողած տառերը:

   Ամբողջ

   թռչել

   կդարձնեն

   երբեք

2. Գրի՛ր տեքստում ընդգծված բառերի հականիշները:

   ա/ սովորական - անսովոր

   բ/ փոքր - մեծ

   գ/ սիրուն - տգեղ

   դ/ տխուր - ուրախ

3. Տխուր նշանակում է «տրտում,թախծոտ, անուրախ»: Ի՞նչ իմաստով է գործածվել բառը **տխուր գրիչ** արտահայտության մեջ:

   անուրախ

4. **Ձեռք մեկնել** դարձվածքը նշանակում է.

   ա/ձեռքը բռնել

   բ/օգնել, օժանդակել

   գ/վնասել

   դ/կաշկանդել

5. Օտար բառերը փոխարինի՛ր հայերեն տարբերակներով

   ա/ավարիա – վթար

   բ/աֆիցեր – սպա

   գ/դիրեկտոր – տնօրեն

   դ/զիբիլ – աղբ

6. Տեքսից դո՛ւրս գրիր չորս գոյական, որոնք դրված են հոգնակի թվով:

   երեխաներ

   քաղաքներ

   մարդիկ

   փողոցներ

7. Տեքստից դուրս գրիր չորս դիմավոր բայ՝ դիմացը նշելով դեմքը:

   ասաց - նա

   սիրում են – նրանք

   քոնն ենք - մենք

   առանց շան եմ ապրելու - ես

8. Լրացրու ասացվածքները՝ օգտվելով տրված բառերից:
ա/ Ավելի լավ է դառը ճշմարտությունը, քան քաղցր սուտը:
բ/Դու ուրիշին օգնիր,Աստվածն էլ էլ քեզ կօգնի:
գ/Ամեն գործի վերջն է գովելի :
դ/դատարկ տակարը բարձր ձայն կհանի:
գովելի, Աստված, ճշմարտությունը, տակառը

9. Այն ի՞նչն է, այն ի՞նչը.
Արևի պես է,
Կլոր երես է,
Սերմը՝ ճնճղուկի
կտուցի պես է: **Արևածաղիկ**

10. Տեքստից դո՛ւրս գրիր մեկ պարզ ընդարձակ նախադասություն:
Մանչուկին տանը բոլորը սիրում են ու երես տալիս:

11. Տեքսից դո՛ւրս գրիր մեկ հարցական նախադասություն:
Մանչուկը նրան կբերեր, բայց ո՞վ կթողներ տանը շուն պահել:

12. Նկարագրի՛ր Կառլսոնին:
Կառոլսոնը անվախ փոքրիկ մարդուկ է, ով կարող է թռչել: Նա ապրում է շենքի ծխնելույզի հետևում, որտեղ նա ունի փոքրիկ տուն: Նա շատ բարի և զվարճալի է:

13. Կուզեի՞ր լինել Մանչուկի փոխարեն: Ինչո՞ւ:
Ես չէի ուզի լինել Մանչուկի փոխարեն. Քանի որ նա միայնակ էր և չուներ շնիկ:

14. Ի՞նչ երազանք ուներ Մանչուկը:
Մանչուկը երազում էր ունենալ փոքրիկ շնիկ:

15. Ինչպե՞ս կուզեիր, որ ավարտվեր այս պատմությունը:
Մաչուկի ընկերները, իմանալով, որ նա շատ է երազում շնիկ ունենալ, իր ծննդին իրեն նվիրեցին մի գեղեցիկ փոքրիկ շնիկ: Մաչուկը շատ ուրախացավ, և այդ օրվանից նա ամենաերջանիկ երեխան էր: